# ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

08.03.2022 12:01



Հարգելի՛ կանայք,

ջերմորեն շնորհավորում եմ ձեզ կանանց միջազգային օրվա կապակցությամբ:

Այսօր բոլորս հայտնում ենք ձեզ մեր բարեմաղթանքները, միաժամանակ գիտակցելով, որ ձեր հանդեպ հոգատարությունը չպետք է սահմանափակվի միայն այս օրով:

Անգնահատելի է այն առաքելությունը, որը դուք կատարում եք ամուր ընտանիքի և երեխաների դաստիարակության գործում ինչը մեր հասարակության հաջողության գրավականն է:

Վստահ եմ՝ հանրային կյանքի բոլոր բնագավառներում ձեր ակտիվ ներգրավվածությունը շարունակելու է նպաստել մեր երկրի զարգացմանն ու պետականության հզորացմանը: Այդպիսի հաջողված օրինակ է փաստաբանական համայնքը որի գրեթե 50 տոկոսը կազմում են կանայք:

Սիրելի՛ կանայք, գարնանային այս գեղեցիկ տոնի առթիվ կրկին շնորհավորելով ձեզ՝ մաղթում եմ, որ մշտապես լինեք սիրո ու նվիրումի ձեր կատարյալ առաքինության մեջ, լինեք առողջ, երջանիկ ու սիրված: Ձեզ նորանոր հաջողություններ՝ ի բարօրություն մեր ընտանիքների և ի շահ մեր հայրենիքի:

BACK
```
$(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```